



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԱՅՎԱԶՈՎՍԿԻ

Յովհաննէս Այվազովսկի, հայկական ծագումով աշխարհահռչակ նկարիչը ծնած է Խրիմի (Քրերմ) Թէոտոսիա քաղաքին մէջ 1817ին: Նախնական կրթութիւնը ստացած է տեղւոյն հայկական դպրոցին մէջ: Իր րնտանիքին ազգանունն էր «Այվազեան»:

Աւարտած է Բեդերսպուրկի Գեղարուեստական Ակադեմիան, արժանանալով ոսկի մետալլի: Յետոյ վերադարձած է իր ծննդավայրը ու սկսած է նկարել Խրիմի ծովափեայ քաղաքներու տեսարաններ:



Եղած է նշանաւոր «Օովային Նկարիչ»:

Արժանացած է բարձր շքանշաններու:

Այվազովսկի մեծ հայրենասէր մըն էր, միաժամանակ քղալով նաեւ մեծ մարդասէր մը: Միշտ օգնած է ամէնուն առանց կրօնի եւ ազգի խտրութեան:

1857ին կէս տարի ապրեցաւ Փարիզի մէջ, իր անհատական ցուցահանդէսը ներկայացուց ժողովուրդին:

Առաջին անգամ իրեն շնորհուեցաւ Ֆրանսայի «Պատուոյ Լեգէոն»ի շքանշանը: Ա ն ծանօթացած է Օսմանեան Պալատի ճարտարապետ Սարգիս Պալեանի եւ անոր նուիրած է իր հոյակապ պատաններէն մէկը, որ ան ալ իր կարգին նուիրած է գայն Մուլթան Աատոպ Ազիզին:

www.hayart.com





Նկարչասեր սուլթանը հետաքրքրուած է Այվազովսկիի նկարներով եւ զինքը հրաւիրած է Պոլիս եւ խնդրած է աջիատիլ պալատին մէջ: Այվազովսկի Սուլթանին կողմէ պարգևատրուած է «Օսմանիէ»ի բարձր շքանշանով:

Խրիմի մէջ հիմնած է հայկական դարոց, սուլթանի գեղարուեստական ուսումնարան, պատմահնադիտական թանգարան, քաղաքին խմելու ջուրը հայթայթող սարքաւորում, երկաթուղիներու շինութիւններ, եկեղեցիներու նորոգութիւններ: Օգնած է ուսանողներու եւ մեկենարան դրած է արժէքաւոր պատմական գիրքերու հրատարակութիւններուն: Օժանդակած է **Կարմիր Մահիկին**:

Այվազովսկիի բնաբանն էր. «շատ արտադրել (շատ գծել) առանց վիատելու, որպէսզի կարենար աւելի շատ օգնել կարիքաւորներուն»:

Թողած է 6000 է աւելի պատասօներ:

1900ին մահացած է Խրիմի Թէոտոսիա քաղաքին մէջ եւ իր փափարով թաղուած է Ս. Մարգիս Եկեղեցոյ բակէ, ուր նաեւ մկրտուած էր եւ պսակուած: Երբ մարաքին վրայ փորագրուած է Ե. դարու պատմիչ Մովսէս Խորենացիի խօսքը.

«Մնաւ մահկանացու, թողուց անմահ յիշատակ»:

